ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-19/2

ք. Երևան «28» 03 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Աստղիկ Գրատուն>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Զունգուրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Կատարողը իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պատվիրատուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Պատվիրատուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Պատվիրատուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 9429264 /ինը միլիոն չորս հարյուր քսանինը հազար երկու հարյուր վաթսունչորս/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.3 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի

փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի **N 1, N 2** համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Աստղիկ Գրատուն ՍՊԸ
Ք. Երևան, Կառավարական տուն 2	ք.Երևան, Նորք 2-րդ, 32տ.
ՀՀ ՖՆ աշխատակազմի	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 1930065750990100
Հ/Հ 900011005122	ՀՎՀՀ 01505177
ՀՎՀՀ 02512868	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն_____ Ս. Չունգուրյան
_____ Ն. Հարությունյան	Կ.Տ
/ստորագրություն/	
Կ.Տ	

«28» 03 **Հավելված N 1**
2019թ. կնքված
ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժինները	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ Դասակարգման (CPV)	Ապրանքի							
		Անվանումը, ապրանքային նշանը	Արտադրողը, ծագման երկիրը	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը	միավորի գինը, ՀՀ դրամ	ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետը*
1	39191110/1	Ուսումնադիդակտիկ ցուցապաստառներ		<<Արդի զենքը, զինատեսակները և զինամթերքները>> ուսումնադիդակտիկ ցուցապատառների լրակազմը բաղկացած է **18** ցուցապաստառներից, այդ թվում՝ **1.<<Ս-300>> զենիթահրթիռային համալիր** - Ցուցապաստառի վրա պետք է լինի հետևյալ մարտավարատեխնիկական բնութագրերը՝ խոցման գոտու հեռավորությունը, խոցման բարձրությունը, բացազատման ժամանակը, հրթիռների քանակը, թիրախների միաժամանակյա խոցման քանակը, անձնակազմը, հրթիռի երկարությունը և Ս-300 զենիթահրթիռային համալիրի նկարը՝ տեսանելի: **2.<<ԲՈՒԿ>> զենիթահրթիռային համալիր** - Ցուցապաստառի վրա պետք է լինի հետևյալ մարտավարատեխնիկական բնութագրերը՝ թիրախի հայտնաբերման հեռավորությունը, կրակի հեռավորությունը, խոցման բարձրությունը, հրթիռի քաշը, բացազատման ժամանակը, մեքենայի արագությունը, հրթիռների քանակը և <<ԲՈՒԿ>> զենիթահրթիռային համալիրի տեսանելի նկարը: **3.<<ԻԳԼԱ-Ս>> դյուրակիր զենիթահրթիռային**	լրակազմ	1679	5616	9429264	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը

				համալիր- Ցուցապաստառի վրա պետք է լինի հետևյալ մարտավարատեխնիկական բնութագրերը՝ խոցման բարձրությունը, խոցման հեռավորությունը, ծավալման ժամանակը, հրթիռի քաշը, արագությունը՝ հանդիպական ընթացքով և հասնելու ընթացքով և <<ԻԳԼԱ-Ս>> դյուրակիր զենիթահրթիռային համալիրի հրթիռի տեսանելի նկարները: <<ԻԳԼԱ-Ս>> դյուրակիր զենիթահրթռային համալիրի լուսանկարը, որի աջ ներքևի անկյունում երևում էկիրառման օրինակի լուսանկարը: **4.<<ՕՍԱ>> ավտոմատացված զենիթահրթիռային համալիր**- Ցուցապաստառի վրա պետք է լինի հետևյալ մարտավարատեխնիկական բնութագրերը՝ թիրախի հայտնաբերման առավելագույն հեռավորությունը, կրակի հեռավորությունը, մեքենայի արագությունը, ընթացքի պաշարը, <<Կարող է լողալ>> բառերը և նկարը, հրթիռների քանակը, հրթիռի երկարությունը և <<ՕՍԱ>> ավտոմատացված զենիթահրթիռային համալիրի և հրթիռի տեսանելի նկարները: **5.<<ՏՈՒՆԳՈՒՍԿԱ>> զենիթաթնդանոթային հրթռային համալիր**- Ցուցապաստառի վրա պետք է լինի հետևյալ մարտավարատեխնիկական բնութագրերը՝ թիրախի խոցումը ըստ հեռավորության և բարձրության, մեքենայի առավելագույն արագությունը, մարտական հաշվարկը, ծավալման ժամանակը, սպառազինությունը: <<ՏՈՒՆԳՈՒՍԿԱ>> զենիթաթնդանոթային հրթռային համակարգի և հրթիռի ու զենիթային ավտոմատի տեսանելի նկարները: **6. <<ՏՈՐ-Մ2>> զենիթահրթռային համակարգ**- Ցուցապաստառի վրա պետք է լինի հետևյալ ռազմատեղնիկական բնութագրերը՝ թիրախի խոցումը ըստ հեռավորության և բարձրության, թիրախի արագությունը, մարտալրակազմը, մարտական հաշվարկը, միաժամանակ խոցվող թիրախների քանակը, հակազդելու ժամանակը: <<ՏՈՐ-Մ2>> զենիթահրթռային համակարգի տեսանելի նկարը: **7. <<ՍՈՒ-27>> կործանիչ**- Ցուցապաստառի վրա պետք է լինի հետևյալ ռազմատեղնիկական					

				բնութագրերը՝ թռիչքի առավելագույն բարձրությունը, արագությունը, անձնակազմը, թնդանոթի տրամագիծը, հրթիռների քանակը և թռիչքի հեռավորությունը: <<ՍՈՒ-27>> կործանիչի նակարը ցուցապաստառի վրա պետք է լինի այնպես, որ երևան նաև հրթիռները: **8.<<ՄԻ-24>> ուղղաթիռ**- Ցուցապաստառի վրա պետք է լինի հետևյալ ռազմատեղնիկական բնութագրերը՝ թռիչքի առավելագույն բարձրությունը, արագությունը, անձնակազմը, փողային գնդացիրի քանակը, հրթիռ ռումբների քանակը և առավելագույն հեռավորությունը: <<ՄԻ-24>> հարվածային ուղղաթիռի դիմային և կողային նակարները առանձին առանձին: Առանձին պետք է երևա փողային գնդացիրի լուսանակրը, որտեղ տեսանելիորեն երևում են չորս գնդացիրները: **9.<<ԻՍԿԱՆԴԵՐ-Է>> օպերատիվ մարտավարական հրթիռային համալիր**- Ցուցապաստառի վրա պետք է լինի հետևյալ ռազմատեղնիկական բնութագրերը՝ թիրախի խոցման հեռավորությունը, առավելագույն արագությունը, մարտական հաշվարկը, հրթիռների տեսակները և քանակը, բացազատման ժամանակը,, կառավարման համակարգը, թռիչքի արագությունը: Պետք է լիննի <<ԻՍԿԱՆԴԵՐ-Է>> օպերատիվ մարտավարական հրթիռային համալիրի ամբողջական լուսանկարը և հրթիռի առանձին լուսանկարը, որտեղ գծանշումով երևում է երկարությունը արտահայտված մետրով: **10.<<ԳՐԱԴ>> (ԲՄ-21) համազարկային կրակի ռեակտիվ համակարգ**- Ցուցապաստառի վրա պետք է լինի հետևյալ ռազմատեղնիկական բնութագրերը՝ փողերի տրամաչափը, խոցման հեռավորությունը, ուղղորդիչների քանակը, անձնակազմի քանակը, բացազատման ժամանակը, քաշը: Պետք է լիննի <<ԳՐԱԴ>> (ԲՄ-21) համազարկային կրակի ռեակտիվ համակարգի կողային լուսանկարը՝ այնպես, որ պարզորոշ կերպով երևան ուղղորդիչները և նրանց քանակը, առանձին փոքր պլանի վրա պետք է երևա հրթիռը արձակելիս և հրթիռի առանձին նկարը՝ կտրվածքով:					

				11.<<ՄՍՏԱ-Ս>> ինքնագնաց հաուբից- Ցուցապաստառի վրա պետք է լինի հետևյալ ռազմատեղնիկական բնութագրերը՝ փողերի տրամաչափը, կրակի հեռավորությունը, մարտալրակազմը, անձնակազմը, գետնահեռությունը և քաշը: Պետք է լիննի <<ՄՍՏԱ-Ս>> ինքնագնաց հաուբիցի լուսանկարը: **12.<<ՍՄԵՐՉ>> համազարկային կրակի ռեակտիվ համակարգ**- Ցուցապաստառի վրա պետք է լինի հետևյալ ռազմատեղնիկական բնութագրերը՝ տրամաչափը, խոցման հեռավորությունը, ուղղորդիչների քանակը, հրթիռների քանակը, բացազատման ժամանակը, քաշը և խոցմանմակրերսը: Պետք է լիննի <<ՍՄԵՐՉ>> համազարկային կրակի ռեակտիվ համակարգի կողային լուսանկարը՝ այնպես, որ երևան ուղղորդիչները և նրանց քանակը, առանձին փոքր լուսանկար՝ հրթիռներ արձակելիս և առանձին հրթիռի նկարը: **13.<<ՏՈՍ-1Ա>> (ՍՈԼՆՑԵՊՅՈԿ) հրանետային համակարգ**- Ցուցապաստառի վրա պետք է լինի հետևյալ ռազմատեղնիկական բնութագրերը՝ խոցման հեռավորությունը, առավելագույն արագությունը, մարտռական հաշվարկը, հրթիռների տեսակներն ու քանակը, խոցման մակերեսը: Պետք է լինի <<ՏՈՍ-1Ա>> (ՍՈԼՆՑԵՊՅՈԿ) հրանետային համակարգի լուսանկարը՝ այնպես, որ համակարգը ամբողջությամբ դիմացից և կողքից երևա: Առանձին հրթիռի նկարը,որտեղ պետք է երևա հրթիռի երկարությունը միլիմետրերով: **14.<<ՏՈՉԿԱ-ՈՒ>> օպերատիվ մարտավարական հրթիռային համալիր**- Ցուցապաստառի վրա պետք է լինի հետևյալ ռազմատեղնիկական բնութագրերը՝ կրակի հեռավորությունը, արագությունը, անձնակազմը, հրթիռի քաշը և ընդհանուր քաշը: Պետք է լինի <<ՏՈՉԿԱ-ՈՒ>> օպերատիվ մարտավարական հրթիռային համալիրի լուսանկարը որտեղ պարզորոշ կերպով երևահրթիռային համալիրը՝ հրթիռով: **15. <<ՄԻԳ-29>> կործանիչ**- Ցուցապաստառի վրա					

				պետք է լինի հետևյալ ռազմատեղնիկական բնութագրերը՝ թռիչքի առավելագույն բարձրությունը, արագությունը, անձնակազմը, թնդանոթը, հրթիռ ռումբների քանակը և թռիչքի հեռավորությունը: Պետք է լինի <<ՄԻԳ-29>> կործանիչի նակարը. որը պարզորոշ կերպով արտացոլում է կործանիչը: **16. <<ՎԱՍԻԼՅՈԿ>> 82 մմ ավտոմատ ականանետ-** Ցուցապաստառի վրա պետք է լինի հետևյալ ռազմատեղնիկական բնութագրերը՝ տրամաչափը, արկի քաշը, կրակի հեռավորթությունը, հաշվարկը, արագաձգությունը և ընդհանուր քաշը: Պետք է լինի <<ՎԱՍԻԼՅՈԿ>> 82 մմ ավտոմատ ականանետի լուսանկարը: Վերևի աջ անկյունում ՀՀ ՊՆ զինանշանը: **17. <<ՍԱՆԻ>> 120 մմ ականանետ-** Ցուցապաստառի վրա երևում են երկու ականանետի մարտավարատեխնիկական բնութագիրը՝ տրամաչափը, կրակի առավելագույն հեռավորությունը, արագաձգությունը քաշը և հաշվարկները: Պետք է լինի <<ՍԱՆԻ>> 120 մմ ականանետի լուսանկարը: Վերևի աջ անկյունում ՀՀ ՊՆ զինանշանը: **18. <<ՊՈԴՆՈՍ>> 82 մմ ականանետ-** Ցուցապաստառի վրա երևում են երկու ականանետի մարտավարատեխնիկական բնութագիրը՝ տրամաչափը, կրակի առավելագույն հեռավորությունը, արագաձգությունը քաշը և հաշվարկները: Պետք է լինի <<ՊՈԴՆՈՍ>> 82 մմ ականանետի ականանետի լուսանկարը: **<u>Ծանոթություն.</u>** 1. Տեխնիկական ցուցանիշները յուրաքանչյուր մեկ ցուցապաստառի համար. չափսը՝ A3 ֆորմատ, կազմը՝ լամինացված, թուղթը՝ կավճապատ՝ ոչ փայլուն 115 գ/քմ, տպագրությունը՝ գունավոր (առնվազն 4 գույն): 2.Յուրաքանչյուր ցուցապաստառի վերևի աջ անկյունում պետք է լինի ՀՀ ՊՆ զինանշանը: 3. Պարտադիր պայման՝ ցուցապաստառները պետք է երաշխավորված լինեն ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝ որպես ուսումնական նյութ					

				ըստ ՀՀ ԿԳՆ նախարարի 14.12.2012թ թիվ 1144-Ն հրամանով հաստատված կարգի: 4.Հատուկ նշագրում՝ յուրաքանչյուր ցուցապաստառի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ <<Վաճառքի ենթակա չէ>> և <<Երաշխավորված է ՀՀ ԿԳՆ կողմից>> բառերը: 5. Յուրաքանչյուր լրակազմ պետք է տեղադրված լինի թղթե կազմի մեջ /թուղթը՝ կրաֆտ/, որի վրա պետք է նշված լինի Հայ պետ ստանդարտի կոլեգիայի 1996 թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված <<Հրատարակություն, ելքային տեղեկություններ>> ԳՈՍՏ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան ելքային տեղեկությունները և լրակազմի անվանումը: 6.Ցուցապաստառների բաշխումն իրականցվում է կատարողի կողմից՝ համաձայն կից ներկայացված բաշխման ցուցակի: 7. Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:					

Մատակարարման ժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Ն. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

_____ Ս. Չունգուրյան

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ
ՈՒՍՈՒՄՆԱԴԻԴԱԿՏԻԿ ՑՈՒՑԱՊԱՍՏԱՌՆԵՐԻ

Հաջորդական	Անվանումը	Երևան՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ, նախնական(արհեստագործական) և միջին մասնա. ուս. հաստատություններ*	Տավուշ՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ, նախնական(արհեստագործական) և միջին մասնա. ուս. հաստատություններ**	Լոռի՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ, նախնական(արհեստագործական) և միջին մասնա. ուս. հաստատություններ**	Շիրակ՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ, նախնական(արհեստագործական) և միջին մասնա. ուս. հաստատություններ**	Արագածոտն՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ, նախնական(արհեստագործական) և միջին մասնա. ուս. հաստատություններ**	Կոտայք հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ, նախնական(արհեստագործական) և միջին մասնագ. ուս. հաստատություններ**	Գեղարքունիք՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ, նախնական(արհեստագործական) և միջին մասնագ. ուս. հաստատություններ**	Արմավիր՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ, նախնական(արհեստագործական) և միջին մասնագ. ուս. հաստատություններ**	Արարատ՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ, նախնական(արհեստագործական) և միջին մասնագ. ուս. հաստատություններ**	Վայոց_Ձոր՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ, նախնական(արհեստագործական) և միջին մասնագ. ուս. հաստատություններ**	Սյունիք՝ հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներ, նախնական(արհեստագործական) և միջին մասնագ. ուս. հաստատություններ**	ՀՀ-ում գործող մասնավոր դպրոցներ***	ԼՂՀ**	ՀՀ-ում գործող մարզառազմական մասնագիտացված ուս. հաստատություններ***	Ընդամենը, լրակազմ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
1	<<Արդի զենքերն ու զինատեսակները>> ուսումնադիդակտիկ ցուցապաստառների լրակազմ	240	80	150	150	110	105	120	110	110	50	100	37	268	49	1679

Ծանոթություն

* ուսումնադիդակտիկ ցուցապաստառները հանձնվում են Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչություն:

** ուսումնադիդակտիկ ցուցապաստառները հանձնվում են մարզպետարանների կրթության, սպորտի և մշակույթի վարչություններ և Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն:

*** ուսումնադիդակտիկ ցուցապաստառները հանձնվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության վարչություն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Ն. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

---------- Ս. Չունգուրյան

Հավելված N 2
«28» 03 2019թ. կնքված
ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ. դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ապրանքի անվանումը	Ենթակա են վճարման 2019թ պետական բյուջեից.**				Ընդամենը
			1-ին եռամսյակ	1-ին կիսամյակ /ապրիլ/	9 ամիս	Տարի՝ մինչև դեկտեմբերի 20-ը	
1	39191110/1	Ուսումնադիդակտիկ ցուցապաստառներ	-	9429,264	9429,264	9429,264	9429,264

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Ն. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

----------Ս. Զունգուրյան